

ԴԱԻԻԹ ԲԷԿ

ԿԱՄ

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՂԱՓԱՆՑԻՈՑ»

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Յետ հրատարակութեան յանձնելու Դաւիթ Բէկի պատմութեան այն մասը՝ որ քաղուած էր ակամատես վկաններու ականդած հաղորդումներէն (Ձեռ. քիւ 2685)*, այժմ հրապարակ կ'ելլէ, դարձեալ՝ առաջին անգամ ըլլալով, Ղափանի հերոսական պատերազմներուն (1722-1728) համապատում բնագիրը, խմբագրուած՝ Մխիթար Արքեօս առաջին աշակերտներէն Սեբաստացի Հ. Ղուկաս Վրդ. Ստեփանոսեանի կողմէ, 1737ի ատենները (Ձեռ. քիւ 620):

Ուրախ եմք հաղորդելու՝ որ շուտով լոյս պիտի տեսնէ բոլորը Բագմավէպի «Հայագիտական Մատենաշար»ի քիւ 12 հատորիկով, ուր պիտի գտնուին, ցարդ հրատարակուածներէն գատ, կարեւոր Յաւելուածներ ալ. պիտի տրուին մաւր քաղդաստական սիւնակներ՝ Արգար Գուլամիրեանցի 1871ի հրատարակութեան հետ համեմատելով մերկայ բնագիրը:

Հատորին պիտի կցուին անձնանուններու եւ տեղանուններու ցանկեր, ինչպէս մաւր ընդարձակ մատենագիտութիւնը՝ Ժէ. եւ ԺԸ. դարերու մեր ազատագրական շարժումին շուրջ կատարուած գրականութեան մասին, զոր օգտագործած է Մեծարգոյ Հ. Սամուէլ Վրդ. Արամեան՝ պատրաստելու համար հատորին ընդարձակ Յառաջաբանը:

Գիրքը լոյս պիտի տեսնէ 1978 թուականի ընթացքին, Դաւիթ Բէկի մահուան 250ամեակին առիթով (1728-1978), որպէս պատուոյ յուշարձան՝ ազգային մեծ հերոսի պայծառ անունին, հայրենասիրական վառ զգացումներով:

ԽՄԲ.

* Տե՛ս «Բագմավէպ» ճլ՛ե. (1977), Թ. 1-2, էջ 298-324:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՂԱՓԱՆՑԻՈՑ

Բ. ՕՐԻՆԱԿ

(Մտնդրն. Ս. Ղազարու, Ձեռագիր քիւ 620)

ՀԱՄԱՊԱՏՈՒՄ ԲՆԱԳԻՐ

ԽՄԲԱԳՐԵՑ

Հ. ՂՈՒԿԱՍ ՎՐԴ. ՍԵԲԱՍՏԱՅԻ ՍՏԵՓԱՆՈՍԵԱՆ

2ա

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՂԱՓԱՆՑԻՈՑ՝

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Թէ ո՞րպէս եւ վասն է՞ր եղել մուտն Դաւիթի Պէկին ի Ղափան², եւ թէ զի՞արդ ելին միացան ընդ մմա բնակիչք գաւառին եւ ընդդէմ դարձան Թուրքաց:

Ի ժամանակին՝ յորժամ զօրացան ազգն Աղուանից Թուրքաց, ի կողմանս Հնդկաց՝ ի Ղանտահար գաւառին, եւ յարձակեցան յաշխարհն Պարսից՝ ասպատակաւ աւար հարկանել, մինչեւ ի գալ սլաշարել նոցա եւ առնուլ զՍպահան քաղաք եւ սատակել զՇահ Հիւսէին արքայն Պարսից, որ եղել յամի Տեառն 1721, եւ ի Թուին Հայոց ՌՃՀ:

Ի յայս եւ ի սոյն ժամանակի, ի հիւսիսոյ Հայոց՝ Լակզի Թաթարքն ի կողմանս Հայոց եւ Աղուանից արշաւեցին, եւ ըդդիւղորէսն³ Գանջու եւ Շամախու ասպատակեալ աւար առին, եւ զԱղուլեցին ի Մուսապէկեան տոհմէ գիշխանն Շամախու ըսպանին, | եւ զամենայն զօրաւոր զիմակացսն սատակեցին, եւ ժողովուրդս երկրին եւ զկանայս եւ զմանկունս գերի վարեցին, զորոց չունիմք յայսմ վայրի⁴ մի ըստ միովէ պատմել:

2բ

1. Ձեռ. ԽԱՓԱՆՑԻՈՑ:
2. Ձեռ. Խափան:
3. Ձեռ. զգիւղորէսն: Այսուհետեւ միշտ կ'ուղղենք այսպէս:
4. Ձեռ. երկու անգամ կրկնած է վայրի բառը:

Եւ կամ⁵ թէ զի՞արդ զայսչափ չարիս տեսեալ Հայոց բնակչացն Գուգարացւոց⁶ եւ Ուտացւոց՝ ընդդէմ ելին նոցա ի բաց վանել, դուռնդ կաղմեցին, զէն զգեցան, պատրաստեցան ի պատերազմ, ճակատ կաղմեցին առ Թարթար գետովն, ընդդէմ ամենայն յարձակելոցն յասպատակութիւն երկրին իւրեանց. որք եւ զանուն առին այսու եւ կոչեցան մեծ Սղնախ մինչեւ ցայսօր:

Եւ թէ ո՞րպէս հարին վանեցին թէ՛ զԼաղկին, թէ՛ զՊարսիկն եւ թէ՛ զՕսմանցին՝ ոչ ունիմք գրել. այլ միայն զիմբելոյն Հայոց յեթնաբերդեան վաւառին Ղափանու⁷ եղելոցն ձեռն արկանեմք պատմել:

3ա Յամին հաղարերորդի հարիւրերորդի եօթանասներորդի⁸ եւ զերորդի հայկազեանս թուականի, յորժամ լուան բնակիչք եօթնաբերդեան զաւառի Ղափանու զասպատակն եւ զաւերումն Գանջու եւ Շամախու, Հայք եւ Պարսիկք առ հասարակ խռովեցան, եւ զահի հարեալ սասանեալ տաղնապէին, եւ իբրեւ ամիսս երկու կամ երեք երթեւեկս առ միմեանս առնել ի միմեանց կասկածէին. զի զանձինս իւրեանց առ հասարակ ի խնամոց հանրական ընտանի խնամակալութեան | լքեալս տեսանէին. վասն այսորիկ քաղաք ի քաղաքէ, աղբ յաղբէ, եւ իշխան յիշխանէ կասկածանս թշնամութեան կրեալ տաղնապէին: Ահա՛ զսոյնս պիտի աղէտս չարեաց եւ սոքա կրէին:

Արդ՝ ի սոյնպիսի աւուրս դառնութեան սասանութեան, ոմն Ստեփանոս անուն, ի Հայոց աղբէ, Վանքեցի, ի կողմանցն Կալերու, խորհուրդ ի մտի դնէր՝ անցանել ի Սիսան գաւառ, եւ գնալ հասանիլ յաշխարհն Վրաց, ի քաղաքն Մցխիթ, առ Շահնաւուզ իշխանաց իշխանն Վրաց, եւ խնդրել ի նմանէ զայր մի տալ Ղափանու ի զօրադուլիս, եւ հրաման տալ նմա զօրաժողով լինելոյ եւ զերկիրն ի թշնամեաց պահելոյ. զի զայս ոչ ոք ի սոսկականացն իւրովի առնել համարձակէր. ապա եթէ՛ ոք առնէր, ժողովուրդն զնա իբրեւ ապստամբեալ ի տէրութենէ՝ ի բաց մերժէր: Այլ իշխանն Վրաց մեծ էր, եւ զայսպիսի զօրադուլիս կացուցանել նմա անկ էր: Իսկ թէ որով մարթասցի ըզհայցուածն իւր առաջի իշխանին արժանաւոր ցուցանել, խորհեցաւ սուտ դիրս յանուն յիսուն արանց տանուտերանց Ղափանու յօրինել, եւ ըստ նմանութեան իւրաքանչիւր կնքոց նոցա զկնիքս քանդակել, եւ զայն դիր նոքօք կնքեալ հաստատել: Եւ

5. Ձեռ. կամաց (երկրորդ այբին վրայ դրած է երկու կէտ):

6. Ձեռ. Գուգարացւոց:

7. Ձեռ. Խափանու: Այսուհետեւ միշտ կ'ուղղենք այսպէս:

8. Ձեռ. եօթաններորդի:

3բ օրինակ հայցուածոց՝ հրովարտակին այս ինչ էր. | «Տուր մեզ, տէր, զայր մի՝ լինիլ մեզ զօրապետ, զի հրամանաւ լիցի մեզ այս օրինաւոր, եւ մեք զդօրսն հողամք պատրաստել, եւ նոքօք զգաւառն մեր ի թշնամեաց աներկեան առնել»:

Եւ զնաց Ստեփաննոս, եւ եհաս ի Մծխիթ քաղաք, յանդիման եղեւ իշխանին Վրաց, եւ դոյժ¹⁰ տուեալ նմա յաղաքս նախալիչատակեալ քաղաքացն, պատմեաց նմա եւ զամենայն վրտանդս եւ զխռովութիւնս, զահ եւ զերկիւզ ժողովրդեանն Ղափանու, եւ մատոյց նմա զհրովարտակն՝ զոր արարեալ էր յանուն տանուտերանցն: Հաճոյ թուեցաւ իշխանին հայցուածն, զոր յանուն նոցա հայցէր. եւ կոչեալ զԴաւիթ Պէկն Մծխիթացի, ի հայկազեանս տոհմէ, ետ նմա զիշխանութիւն երթալ յաշխարհն Սիւնեաց, որ այժմ կոչի Ղափան, զօրաժողով լինել անդ, եւ պահել զերկիրն Հայոց: Եւ նա յերեսաց իշխանին Վրաց, եւ եկն էհաս յաշխարհն Սիւնեաց յամի Տեառն 1722 եւ ի թուին Հայոց Ռ.Ճ.Հ.Ա. եւ բանակեցաւ ի սահմանս Սիսան գաւառին, ի գեղեցիկ զաշտաւայրն յայն երեքդաղաթեան, որ ի յայլասեռից կոչի Իւլթէփէ:

4ա Եւ ինքն Դաւիթ աղնուական էր, բարեպաշտ, արդարակորով, արիասիրտ, երկայնամիտ խորհրդով, զօրաւոր բանիւք եւ զործովք, տեղեակ դրոց, նախանձայոյղ բարեաց աղբի, եւ վրէժխնդիր | վնասակարաց նորա, սոյնպէս եւ ամենայն հետեւողք¹¹ իւր. զի իբրեւ ելանէր նա յերկրէն Վրաց¹², առ նա ժողովէին ամենայն աղբ զօրութեանց յամենայն կողմանց գաւառին, որք լսէին զնմանէ, արք իբրեւ չորեք հարիւրք, որք նեղեալք եւ տառապեալք էին ի դառն ծառայութենէ այլաղբեաց, արք՝ որք զանձինս իւրեանց եղեալք էին առ ի աղատ լինելոյ ի լծոյ ծառայութեանն այլաղբեաց, արք՝ որոց մինն հալածէր զհաղարս, եւ երկուքն՝ զբիւրս:

Արդ՝ զառաջինն հարկանելով էհար Դաւիթ զՂարաչօւլու¹³ կոչեցեալ Թուրքն ի յիւլթէփէն: Եւ ապա անտի եկեալ բնակեցաւ ի յամուրն որ կոչի Շնհեր, եւ կոչեալ առ ինքն զառաջնորդն Տաթեու՝ պատմեաց նմա թէ յինչ բանս, յինչ խորհուրդս եկեալ է, եւ ասէ. Ջնջելով ջնջեցից զամենայն այլաղբիս յերկրէ աստի յայսմանէ. եւ ժողովեաց առ ինքն զարսն

9. Ձեռ. հայացուածոց:

10. Ձեռ. գուծ:

11. Ձեռ. հետեւողք:

12. Ձեռ. վարաց:

13. Ձեռ. զՂարաչօլու դրած է նախ. տպագրութեան զորտեղեկութեան, մէջ առնելով (ասիկա նշան է սրբադրութեան), վրան դրած է ա:

Շնհերու, եւ էհար ասպատակեաց զգիւղորէսն թուրքաց եւ ժառանգեաց զստացուածս նոցա:

Իբրեւ զայն տեսանէին երեսուն եւ երկու ձիւանշիր կոչեցեալ ցեղն թուրքաց, ի միասին դային, ժողովէին, գունդ կադմէին, եւ դիմէին ի վերայ Դաւիթ Պէկին: Եւ նա եւ ընդ առաջ նոցա ի յՈւլթէփէն, եւ ետես ի հեռուստ զգորսն թշնամեաց՝ զի էին իբրեւ վեշտասան հաղար: Էառ ընդ իւր իբրեւ զչորեքհարիւր ընտիր զօրս, ի վերայ յարձակեցաւ, յաջ եւ ահեակ կոտորելով խրամատեաց զգօրս նոցա. բայց պատերազմն ոչ շուտով վճարեցաւ, այլ տեւեաց իբր զաւուրս երկուս կամ երիս. եւ յետ երրորդ աւուր՝ ապա ի սպառ էհար եւ վանեաց զնոսա, յուսալով յողորմութիւնն Աստուծոյ, եւ էառ զամենայն ինչս նոցա՝ զղէն, զսուր, զերիւար եւ զամենայն աղյսս նոցա:

Յետ այսորիկ առաքեաց նա զՄխիթար սպարապետն իւր ի չէնն որ կոչի Գուրթլար, եւ էհար զայն, եւ էառ զամենայն ստացուածս նոցա:

Արդ՝ լուր եղեւ ամենայն բնակչացն Ղափանու, թէ Դաւիթ Պէկին եկեալ հասեալ է ի թիկունս Հայոց մեծաւ քաջութեամբ, եւ հասանէին առ նա յամենայն կողմանց. զառաջինն դիմէր զալ առ նա թորոս՝ սակաւ արամբ, եւ առնոյր ի նմանէ զիջխանութիւն զօրապետութեան, եւ դառնայր ի Չաւնդուր՝ յերկիրն իւր, ընդ իւր առեալ նաեւ զՊայնտուր զօրավարն Դաւթի:

Յետ այսորիկ դային առ նա զօրօք իւրեանց որդիքն Մադայ մելիքին ձիւղայու, որ եւ կոչի հին ձիւղայ՝ ի Գողթան զաւառին, եւ որդիքն Տիլէնչի մականուանելոյն. եւ սոքա ամենեքեան դային, խառնէին եւ յաւելանային ընդ զօրսն Դաւթի՝ իբրեւ երկուս հազարս արանց զօրաւորաց:

Ընդ այսու ժամանակաւ մելիք ոմն Տաթեւու էր ուրացող¹⁴, որ յառաջն կոչիւր Դաւիթ, բայց յետոյ անօրինեալ ի հաւատս իւր, ինքն եւ ամենայն տուն իւր, կոչեցաւ անուն Պաղրի, եւ որդիք նորա ամենեքեան եղեն Շահ Ղուլի: Սա իբրեւ զդալն Դաւթի լսէր, զարսն Տաթեւու առ ինքն ժողովէր, ամուրս կանդնէր եւ խորհէր տալ պատերազմ ընդ Դաւթի Պէկին: Հապա եւ Դաւիթ Պէկին զգօրսն ժողովէր, գունդ կազմէր, դայր հասանէր ի վերայ նորա, զամուրսն պաշարէր, եւ յետ երկուց աւուրց զայն զրոամբ ածէր, եւ զնա եւ զամենայն ինչս նորա կալեալ ածէր ի Շնհեր, եւ անդ հրամայէր նմա զաւուրս երկոտասան, ի մէջ եկեղեցւոյն, յանդիման ամենեցուն ասել բարձր ձայնիւ զառածս զայս առակաց՝ թէ «Լոյսն Լուսաւորչի հաւատոյն,

14. Ձեռ. ուրացող: Այսուհետեւ միշտ կ'ուղղենք ազ:

վա՛յ ուրացողին» . եւ ապա հատանէ զգլուխ նորա . եւ ինքն դայ բնակի ի Տաթեւ:

Ապա հրեշտակս առաքեաց ի Հալիձոր առ տէր Աւետիսն, եւ առ մելիք Փարսադան աներ նորա, եւ ասէ. Եկայք միաբանեցարուք ընդ մեզ, զի ի բաց հանցուք զթուրք բնակիչս ի միջոյ. եւ նոքա ոչ եկին: Եւ յամին երկրորդի, յետ գալստեան Դաւթի ի Ղափան, եւ յաւուրս քառասնորդաց պահուց՝ ի տօնի սրբոյ Լուսաւորչին, եւ ի վերայ Չաւնդուր երկրին կուսակալն Ղափանու, եւ Փաթալի սուլտանն, եւ ընդ նմա խանն Սեալերին՝ ութ եւ տասն հազարաւ. իսկ զօրքն Հայոց, որք դարան մտեալ էին նոցա, ի տօնի Յարութեանն Քրիստոսի, զիշերայն զԱստուած յօղնութիւն ինքեանց կոչեցին, յանկարծակի զաղաղակ բարձին, ի վերայ յարձակեցան, հարին կոտորեցին զբազումս ի նոցանէ, եւ զայլս ի փախուստ դարձուցին:

Ապա յետ այսորիկ եկին մելիք Փարսադան եւ տէր Աւետիսն յողոյն Դաւթի. իսկ նորա բարկացեալ ի վերայ նոցա, ասէ. Կոչեցի զձեզ, եւ ընդէ՞ր ոչ ելիք յօղնութիւն մեզ. եւ հրամայեաց տանիլ զնոսա ի Շնհեր, եւ անդ արկանել զնոսա ի բանտ. եւ էին նոքա զաւուրս երկոտասան ի բանտի անդ:

Եւ դէպ եղեւ յաւուրսն յայնոսիկ Յօհաննէս պետն Գուգարացուց¹⁵ զալ ի կողմանս յայնոսիկ, յիսուն եւ վեց հազար հայադուր զօրօք, եւ պաշարեալ զանմատչելի բերդն Որոտնայ. եւ ի չկարելն առնուլ զայն ի թուրքաց, դայ ի Շնհեր, եւ գտանէ անդ զտէր Աւետիսն եւ զաներ նորա ի կալանս. ազատէ զնոսա եւ առաքէ առ Դաւիթ Պէկին ի Հալիձոր. եւ ինքն ի Տաթեւ երթայ, գտանէ զգանձն Դաւթի Պէկին, եւ առեալ զայն՝ դառնայ ի տեղի իւր: Իսկ Դաւիթ Պէկին ընկալեալ զմելիք Փարսադայն՝ կացուցանէ զնա յիւրում կարգի զօրապետութեան, ի վերայ երկու հարիւր վաթսուն եւ վեց զօրաց, եւ զտէր Աւետիսն՝ ի վերայ չորեք հարիւր քառասնից:

Յետ այսորիկ իբրեւ լսէր Դաւիթ, թէ զօրաժողով է Ասլամաս Ղուլին ի կողմանս Փուխուրութայ լերին, ի բերդն Չեւու, վաղվաղակի զօրսն գումարէր եւ դայր բնակէր ի Ղարաչիմէն, եւ անտի հրեշտակս առաքէր ի Չաւնդուր, ի Կալեր, ի Կենաուդն եւ ի Մեղրի, զօրավարացն՝ զալ հասանիլ անդ. եւ եկին հասին վաղվաղակի:

Բայց թորոս զօրադուրսն ընդդէմ եկաց նմա ի կռիւս. եւ միջնորդ մտեալ ի մէջ երկուցն՝ հաշտեցուցին զնոսա. եւ ժողովեալ զզօրականսն՝ եւ զնաց ի վերայ Ասլամազ Ղուլոյն, եւ

15. Ձեռ. Գուգարացուց:

մատուցեալ պաշարեաց զամուրս նորա, եւ դժուարացաւ ի յառնուլն զայն, զի էր անառիկ եւ բարձրաբերձ յոյժ. այլ յետ բախելոյն¹⁶ զայն աւուրս երկուս, Մխիթար Սպարապետն եւ տէր Աւետիսն գրոհ տուեալ ի վեր խաղացին, իսկ նոքա ի պարսպէ անտի զսոսա ի բաց մերժեցին. բայց տէր Աւետիսն խաբանօք յամուր ելանէր, եւ զստիկանն ձերբակալէր. եւ յայսմ վայրի զօրքն ամենայն, որք չուրջ էին զբերդաւն, ի պարսպէ անտի ի ներքս զեղանէին, եւ սուր ի վերայ եղեալ՝ զամենեսեան զնոսա առ ետեղ սատակէին. եւ ի նմին աւուր ի յամրոցի անդ կոտորեցին ի Թուրքաց արս չորս հազար, եւ ի սոցանէ մեռան սակաւ ոմանք:

6ր

Ապա զարձ արար Դաւիթ¹⁷, խաղաց զնաց ի Սիսան դաւառ, եւ կալեալ անդ զիշխանս Թուրքաց՝ կոտորեաց:

Եւ ի յամին երրորդի, յետ դալստեան իւրոյ ի Ղափան, երթայ պաշարէ զմեծ եւ զանառիկ բերդն Որոտնու, եւ ի տօնի Ծաղկազարդին, որ չորրորդ օր էր պաշարման բերդին, եղեւ անձրեւ յոյժ, ո՛վ սքանչելեացս, եւ ի սաստկութենէ անձրեւին՝ մի կողմն պարսպին ինքնին անկաւ. սոքա իբրեւ զայն տեսին՝ ձայն ետուն, խրախոյս բարձին, ի վերայ յարձակեցան եւ մտին ի ներքս, եւ հարին կոտորեցին զամենայն այլադղիս, եւ առին զբերդն:

Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ առաքել զբազմութիւն զօրաց իւրոց ի վերայ Թուրքացն Պարկուշատայ, եւ ինքեան սակաւուք մնալ ի Սիսան դաւառի: Եւ ի վերայ նորա խանն Նախիջեւանու¹⁸ չորեքտասան հազարաւ. իբրեւ զայն լսէր Դաւիթ՝ զօրաժողով լինէր վաղվաղակի, ի Դարսպասայ եւ ի տանէն Սիսանայ գունդ կազմէր, եւ գայր հասանէր նմա ի վերայ գետոյն Նախիջեւանու. եւ անդ իբրեւ ընդ միմեանս բախեցան¹⁹ երկուքին ճակատքն, զօրքն խանին փախստեայ լինէին ի սոցանէ, եւ սոքա զհետ մտանէին նոցա ի յուր եւ տասն ժամէ աւուրն մինչեւ ցքսան եւ միեկորդ ժամն վանէին, եւ զբազմ վիրաւորս ի նոցանէ զիաթաւալ կացուցանէին: Բայց ի քսան եւ երկուերորդ ժամուն փախստեայքն ամենեքեան ի միասին հաւաքեցան եւ ի կրունկս ընդդէմ Հայոցն դարձան. իսկ սոքա իբրեւ զայն յանդուզն յարձակումն տեսանէին՝ լքանէին, կասէին եւ ի փախուստ դառնային ի նոցանէ մինչեւ ցդետափն:

7ա

16. Ձեռ. բաղխելոյն:

17. Ձեռ. Ապա դարձ արար Դաւիթ նախադասութիւնը կրկնուած է թէ՛ թղ. 6ա-ի ստորոտը, թէ՛ թղ. 6բ-ի վերեւ:

18. Ձեռ. Նախիջեւանու:

19. Ձեռ. բաղխեցան:

եւ անդ առ ի ճեպոյն տաղնապի, էր որ դետակուր լինէր, եւ էր որ սրոյ ճարակ լինէր, զի պաշարեաց զնոսա սուր Թշնամեացն զկնի, եւ յորդեալ դետն առաջի, եւ ոչ գոյր այլ ելք ճանապարհի. ուստի՝ յայնմիկ վայրի ծախեցան ի սոցանէ աւելի քան զհազար այր, մինչեւ ցհասանել գիշերոյն, եւ մնացեալքն փախուցեալ Թաքեան ոմն ի վէմս, ոմն ի յայրս եւ ի մացառս. եւ յերկրորդ պահու գիշերոյն եկն Հաս Դաւիթ ի Սիսան, եւ փախստեայքն ամենեքեան եկին ժողովեցան առ նա:

7բ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Թէ զո՞րչափ ինչ արար Թորոս զօրապետն, եւ թէ որպիսի՞ պատերազմումք եղեմ ի կողմանս Չավնդրոյ եւ Մեղրոյ²⁰:

Ընդ աւուրս ժամանակացն այնոցիկ՝ իբրեւ լսէր Թորոս ի Որոտնու, որ է ի Չավնդուրն, թէ Դաւիթ²¹ եկեալ հասեալ է բազում զօրօք ի Սիսան դաւառ, ընդ իւր առնոյր արս իբրեւ երեսուն, եւ գայր հասանէր առ նա. եւ առեալ ի նմանէ զիշխանութիւն զօրապետութեան, վաղվաղակի դարձ առնէր, խաղայր զնայր ի Չավնդուր, եւ զարս տեղւոյն առ ինքն ժողովէր, կարգէր կազմէր զնոսա գունդս գունդս, եւ ի վերայ նոցա կացուցանէր հարկւրապետս եւ յինապետս:

8ա

Եւ դէպ եղեւ յաւուրսն յայնոսիկ հօտ մի ոչխարաց սուրտանին, յորում էին երկու հազար ոչխար եւ երկոտասան հոտանին, յորում էին երկու հազար ոչխար եւ երկոտասան հոտանին, զարս առաքէր՝ երթալ կոտորել զհովիւսն եւ զամենայն զհօտն ածել առ ինքն. եւ արարին այնպէս: Եւ այս ամենայն եհաս յականջս Փաթալի սուլթանին Պարկուշատու, եւ յականջս եղբոր նորին՝ Աղասի խանին, եւ գրեաց վաղվաղակի առ Մահնիշար օղլի Սափի Ղուլոյն օրինակ զայս. Աղդ եղեւ մեզ եւ մեք ինքնին տեղեկացաք թէ զիա՛րդ Հայքն Չավնդուր ապստամբեալ են ի մէնջ, եւ զսուր վերացուցեալ ընդդէմ Տաճկաց, ուստի, յայս ինչ աւուր՝ երկոտասան հազարաւ ելանելոց եմ ի վերայ բնակչացն Չավնդուր, եւ դու եւս առցես ընդ քեզ զամենայն

20. Ձեռագրին մէջ, թղ. 7բ, սկիզբը պարագ թողուած է՝ վեց տողի չափ, իբր խորագրի տեղ, որ պիտի գրուէր բոլորգիրով, ինչպէս Ա. զլուխինը: Զէ գրուած նաեւ բնագրի առաջին գիրը՝ Ը: Մենք լրացուցինք՝ առնելով Գուլամիբեանցի հրատարակութենէն (ամդ, էջ 15):

21. Ձեռ. Թաւիթ:

զօրաւորութեամբ, որք են ի Կենտրոն, եւ դու ալի, եւ ես
աստի ելցուք ի վերայ Հայոցն, եւ ջնջեցուք զնոսա ի միջոյ:
Այլ նա ոչ էառ յանձն՝ առնել զայն:

Եւ ել Փաթալի կուսակալն ի վերայ Չալնդրու՝ երկոտա-
սան հաղարաւ: Իսկ բնակիչքն Չալնդրու իբրեւ զայն լսէին,
հարիւր յիսուն վառեալ յիշկետոյ առաքէին՝ երթալ կալնու
զանցս ճանապարհին, զի էր անտառախիտ յոյժ. եւ եկին դա-
րան մտին նոցա անդ: Արդ՝ զօրքն թուրքաց իբրեւ անդր հա-
սանէին, դարանամուտքն ստէս ստէս զհրացանսն ի վերայ ար-
ձակէին, եւ այլ վառեալքն Հայոց ի ճակատ անդր ժամանէին,
եւ զբազումսն ի նոցանէ առ ետեղ սատակէին, եւ զայսն փա-
խըստականս առնէին առաջի իւրեանց մինչեւ ցկողմանս Պար-
կուշատու. եւ յաւուր յայնմիկ անկանէին ի թշնամեացն արք
իբր չորս հազար:

8p

Բայց ի հետեւեալ աւուրն Սափի Ղուլի Լեւազեան երեք
հարիւր սպառազէն արամբք նենդութեամբ | զայ բնակի ի յԱփ-
կու վանսն, եւ գրէ անտի իշխանացն Իքաց աւանին, զի եւ նո-
քա եկեցեան որպէս զի զՄանլեւ եւ զամենայն գիւղորայսն Հա-
յոց, որք էին ի կողմանս յայնոսիկ, աւար առեալ աւերեցեան.
բայց Միքա Սայիլ իշխանն ոչ կամեցաւ զայն: Եւ զայս ամե-
նայն իմացեալք արքն Մանլեւու՝ առաքեցին արս ի Չալնդրու,
եւ ասեն. Ել Սափի Ղուլին, զայս ինչ եւ զայս ինչ խորհի առնել:
Իբրեւ զայն լսէր թորոս զօրապետն, նոյնժամայն վառէր պա-
տրաստէր, եւ հինգ հարիւր վառելովք գիշերայն գիմէր զայր
ի վերայ նորա, եւ ի յառաւօտուն յերեքտասաներորդ ժամուն
հասանէր ի յԱփիւս: Իսկ Սափի Ղուլին իբրեւ զայն տեսանէր՝
փախստեայ գնայր, եւ թորոսն զհետ մտանէր, եւ հարկանէր ի
նոցանէ արս ութսուն: Եւ ի ժամանակին յայնմիկ՝ հարին կո-
տորեցին զերիս գիւղս թուրքաց, եւ առին զամենայն ինչս նո-
ցա եւ դարձան ի Մանլեւ:

Արդ իբրեւ լուր լինէր բանս այս ի Քիս եւ ի յԻքաց, զային
ժողովէին ի միասին ամենայն արք բնակչացն Իքացու, եւ զա-
մենայն զկին եւ զորդիս իւրեանց հանէին ամրացուցանէին ի
բարձրագոյն գագաթն, որ հանդէս աւանին էր, եւ ինքեանք
յարձակեալ զային ի վերայ Մանլեւու: Իսկ թորոս ընդառաջ
լինէր նոցա ի գլխոյ Մանլեւուն, եւ ի դիմի հարեալ՝ զբազումս
ի նոցանէ | անդանօր սատակէր, եւ զայսն ի փախուստ դար-
ձուցանէր մինչեւ ցՔիսն, եւ ինքն հրաման տայր զօրացն մի՝
պնդիլ զկին նոցա, այլ երթալ հարկանել զտունս նոցա եւ այ-
րել, եւ առնուլ զամենայն ինչս նոցա եւ դառնալ: Եւ իբրեւ
կատարեցին՝ դարձան անդրէն ի Մանլեւ:

9ա

Եւ եկաց թորոս ի Մանլեւ աւուրս երիս, եւ անդ կացոյց
զՊապ Կալերեցի՝ զորդին Սրապիոնի՝ զօրապետ եւ կառավար
ի վերայ երկրին Կենտրոն, եւ ինքն դարձ արար զնաց ի Չա-
լնդրու: Իսկ Պապ զօրաժողով լեալ անդ՝ դայ բնակի ի Կալեր
աւանի:

Բայց Սափի Ղուլին գգիւղորայսն թուրքաց, որք էին ի
Լվազու ձորն, խաղացուցանէ ի յՈւրդուար, եւ մնացին միայն
չորք գիւղք թուրքաց ի կողմանս Արձաւաքարին. եւ հրամայ-
եաց Պապ երթալ կոտորել զնոսա. եւ եկին հարին զերիս գիւղսն
եւ աւար առին զինչս նոցա: Եւ ի թաղամերի էր վաթսուն տուն
թուրքաց. սոքա եկին, լացին, զաղաղակ բարձին առ զօրականսն
Հայոց՝ թէ մեք ըստ ամենայնի ամենայն կերպիւ հպատակիմք
ձեզ. եւ խնայեցին ի նոսա:

9բ

Յետ այսորիկ իբրեւ մի ամիս կամ երկու ի վերայ անցա-
նէր, Սափի Ղուլին առնոյր ընդ իւր արս հինգ հարիւր ի յՈւր-
դուարայ, եւ ի գիշերի միում դայր հարկանէր զերկու գիւղս
Հայոց ի Սայիպուն, զարսն կոտորէր, եւ | զկին եւ զորդիս նո-
ցա գերի վարէր ի յՈւրդուար:

Իսկ Դաւիթ Պէկն իբրեւ զայն լսէր, զՄիխիթար սպարապետն
իւր յառաջ կոչէր, եւ հրաման տայր նմա երթալ սատակել ըզ-
նոյն վերոյ ասացեալ վաթսուն տունն թուրքաց ի թաղամեր.
եւ նա արար այնպէս. (եւ զայսու ժամանակաւ՝ Դաւիթ կատա-
րէր զչինուած բերդին որ ի Հալի ձոր)²²:

Հրաման տայր նաեւ Պապայ զօրապետին երթալ ի Լեւազու
ձորն, եւ եթէ գտանիցէ անդէն մնացեալ չէն ինչ թուրքաց՝ կո-
տորեցէ. եւ ըստ հրամանի նորա՝ ել զնաց հազար հինգ հա-
րիւրով Պապ ի Լեւազու ձորն, եւ զոչ ոք եգիտ ի թուրքաց, զի
սակաւ ոմանք մնացեալ էին, Եւ նոքա եւս փախուցեալ անկան
ի յՈւրդուար: Այլ Պապ յուզեալ գտանէ անդէն զբազում ինչս
եւ առաքէ զայն ամենայն ի Զվար աւանն, եւ զպահապանս կա-
ցուցանէ անդ. եւ ինքն չուէ զնայ անտի ի կողմանս Վայրի-
վարայ, եւ գտանէ անդէն զերիս տունս, որք ուրացեալք էին
զՔրիստոս, զնոսա զամենեւեան կոտորէ եւ առնու զինչս նոցա,
եւ դառնայ ի տեղի իւր՝ բազում գանձուք Եւ աւարաւ. զի ոչ
միայն ի Լեւազու ի գիւղորդիցն թուրքաց, այլ եւ ի կողմանցն
Վայրիվարայ ի Հայոց եհան զբազում ինչս: Եւ այսպէս զօրա-
կանք Դաւիթ յամենայն երկիրն Ղափանու շրջին, յոյզ եւ
10ա խնդիր առնէին, եւ ուր ուրեք զթուրք գտանէին՝ սուր ի վե-

22. Փակագիծը ձեռագրին մէջ ալ կայ:

րայ եղևալ սատակէին, մինչեւ ընտանիք ընտանիք առնել զԹուրքն ի Ղափանու:

Ապա իբրեւ լսէր Դաւիթ, թէ զօրաժողով է Ասլամազ Ղուլին ի կողմանս Փոլսոյ թաղի, վաղվաղակի զօրահատոյց լինէր, ի վերայ հասանէր եւ զնոսա զամենեւեան սատակէր անդ, որպէս ի վեր անդր ասացաք. եւ իբրեւ գայր հասանէր Դաւիթ ի Ղարաչիմէն, ընդդէմ Վանէր նմա Թորոս զօրապետն մարտիւ պատերազմի, եւ միջնորդ մտեալ ի մէջ երկուցն՝ հաշտեցուցին զնոսա: Եւ խաղաց զնաց Դաւիթ ի Հալի ձորն, եւ Թորոսն ի Չալնդուր, իսկ Պապ ի Կենաուղն:

10p Եւ իբրորդի՝ յետ դալստեանն Դաւիթ ի Ղափան, Թորոս զօրապետն հանդէս արար ամենայն զօրաց իւրոց ի Չալնդուր, եւ ժողովեաց զամենայն այր զօրաւոր յերկրէ իւրմէ, առ ի զնալ ի վերայ Ուրդուար քաղաքին: Բայց մելիք Փռանկուլն Երզնայեկ աւանին, որ եւ ասի Կարմիր վանք, որ է ի Պարկուշատ գաւառին, գրեաց առ Թորոսն այսպէս. Ազգ եղև Փաթալի սուլտանին վասն քոյ, թէ զօրաժողով ես առ ի զնալ ի վերայ Ուրդուարոյ. սա աւասիկ եւս զօրաժողով է աստ եւ սպասէ, զի յորժամ դու ելանիցես յերկրէդ, նա վաղվաղակի ի վերայ | հասեալ՝ սատակիցէ զերկիրն քոյ. ուստի յոյժ բարւոք արասցես, եթէ նախ եկեսցես ի վերայ Պարկուշատու. նա եւ զի եւ ի մեզ եղեալ Հայսն Պարկուշատայ քեզ թիկունս առնեմք: Այլ գայս ամենայն անօրէն մտօք, նենգաւոր խորհրդով գրէր, զոր գրէրն, զի ի ծողակս թշնամուցն զնա արկցէ, առ ի հաւատարիմ ցուցանել զինքն սուլտանին, զի մի՛ ի բաց լիցի ի տէրութենէն, (իբր թէ զհետ միտեալ իցէ նա Դաւիթ եւ զօրականաց նորա)²³. եւ ոչինչ փոյթ եղև նմա լինին անհաւատարիմ, նենգաւոր, թշնամի Աստուծոյ, եւ մարդկան եւ ազգին իւրոյ եւ ժողովրդեանն²⁴ մատնիչ եւ սատակիչ, որպէս ի հետազայս ցուցցին առնս²⁵ այսորիկ թշնամութիւն եւ չարիք: Եւ հաւատաց Թորոս բանից նորա եւ ել զնաց միամտութեամբ եւ եհաս ի յՈւղահորդ, ի սահմանս Պարկուշատու, ինքն եւ ամենայն զօրքն իւր, եւ բանակեցաւ անդ. եւ եկն առ նա Փռանկուլն երկու հազարաւ, եւ եկաց ի մի կողմն զօրացն Թորոսին: Եւ եհաս անդր Փաթալի սուլտանն, եւ եղբայր նորա՝ Աղասի խանն, բաղում զօրօք, քորն²⁶ որչափ էրն ընդ Թորոսին, կրկնապատիկ

23. Փակագիր ձեռագրէն է:

24. Ձեռ. ժողովրդեանն:

25. Ձեռ. ի առնս:

26. Ձեռ. այսպէս քորն: Թեքեւս կարդացուի քամ քրն:

11ա եւ եռապատիկ, եւ առաւել եւս, իբրեւ ութ եւ տասն հազարաւ. եւ իբրեւ ճակատեցան ընդդէմ միմեանց զօրքն սուլտանին եւ զօրքն Թորոսին, զօրքն սուլտանին փախստեայ | լինէին եւ սոքա զհետ լինէին նոցա:

Իսկ անօրէն Փռանկուլն իբրեւ դայն տեսանէր, զարս զկնի սուլտանին հասուցանէր, եւ ասէ. Ձի՞նչ գործէք, զիա՞րդ փախչիք, դարձարո՞ւք ի կրունկս զի ես ընդ ձեզ եմ. դուք ի յառաջոյ եւ ես զկնի սոցա խորտակեցուք զսոսա. եւ արարին այնպէս, պաշարեցին զօրսն Թորոսին յառաջոյ եւ զկնի, եւ սկսան կոտորել, եւ զԹորոսն սպանին. եւ զերծեալքն ի նոցանէ միայն հազար չորս հարիւր այր եկին ի Չալնդուր, եւ մնացեալքն ամենեքեան անկան անդ: Ահա զայսպիսի անօրէնութիւնս գործեաց Փռանկուլն, եւ ոչ այսչափ միայն, այլ եւ առ ի առաւել հաճոյանալ սուլտանին եւ ցուցանել զինքն թէ ոչ է միտեալ զկնի Դաւիթ եւ զօրականացն Ղափանացուոց, ուրացաւ նաեւ զհաւատն:

11p Արդ՝ այս ամենայն իբրեւ այսպէս անցանէր, Փաթալի սուլտանն խորհուրդ ի մտի դնէր դալ մտանել ի Չալնդուրն եւ կոտորել կորուսանել զքնակիչս նորա: Բայց Նուպար սպարապետն, որ յաջորդեաց Թորոսի, իբրեւ դայն լսէր՝ վաղվաղակի հրոճարտակ առաքէր առ Պապ զօրապետն եւ ասէր. Դու ինքնին զիտես, զի ահա կորեան զօրքն մեր, աւ արդ յարուցեալ գայ ի վերայ մեր Փաթալի սուլթանն. յօգնութիւն հասէք մեզ: Եւ նա վաղվաղակի առաքեաց ի Չալնդուրն երկու հազար զօրս ի յօգնութիւն Նուպարին. իսկ Փաթալի սուլտանն իբրեւ գիտաց թէ օգնութիւնս արարին ի Կենաուղայ Նուպարին, դարձաւ ի տեղի իւր:

Եւ ի զօրավարացն Պապայ՝ որք եկին ի Չալնդուր, երկու զօրավարք ապստամբեցան ի Պապայ՝ վասն խռովութեան ինչ եղելոյ ի մէջ նոցա. եւ եկեալ ի Լիջկին աւանն՝ զօրաժողով եղեն, եւ կամեցան ունել զՊապ, եւ նա փախեաւ ի նոցանէ, եւ ասեն՝ Մեք կառավարեսցուք զերկիրս: Եւ իբրեւ գայս լսէ Դաւիթ Պէկն, առաքէ առ նոսա զԿորկի զօրապետն՝ երկերիւր արամբ. եւ նորա եկեալ հաշտեցուցանէ զնոսա, եւ հնազանդ առնէ զնոսա Պապայ, եւ զվերոյ յիշեալ աւարն՝ զոր առին ի Լեւաղու՝ բաժանէ ի մէջն նոցա:

Եւ այսորիկ իբրեւ մի կամ երկու ամիս ի վերայ անցանէր, ի յՈւրդուարայ առ Պապ դուժկան հասանէր, թէ զօրաժողով է Թուրքն առ ի դալ եւ աւերել զՂափան: Յայնժամ իչխանքն Կենաղու ի միասին դային, խորհուրդ խորհէին՝ հրա-

կեալ դայր, եւ յետ երկոց աւուրց ի Հալի ձոր հասանէր: Եւ եղեւ սքանչացումն յոյժ ամենայն տեսողաց՝ զի ոչ մեռաւ, այլ կենդանի է մինչեւ ցայսօր, եւ է մելիք ի Հալի ձոր:

18ա

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Թէ գիա՞րդ Օսմանցիքն եկն եւ հմուտ ի Ղափան. եւ թէ գո՞րքան մարտս պատերազմաց ետուն ընդ նոսա Դաւիթ եւ քաջ զօրականք նորա. եւ թէ գո՞րքան մեծամեծ յաղթութիւն արարին ի նոսա³⁴:

Յամի Տեառն 1724ին, եւ ի թուին Հայոց ՌՃՀԳին, Սուլտան Ահմէտն Օսմանցւոց, որ բռնակալեալ ունէր ի սլաւական կան ծոցոյն ուկրաինա մինչեւ ցեղիպտոս եւ ցլիւրիայ, եւ անտի մինչեւ ցլիւրիկէ, եւ մինչեւ ցրտլոր ծովն Պոնտոսի, եւ զմեծ մասն Հայոց, եւ զայլ բազում ազգս եւ զթաղաւորութիւնս եւ զիշխանութիւնս եւ զաշխարհս նոցա, իբրեւ լսէր զվտարումն Պարսից արքային ի հայրենի աթոռոյն, խորհեցաւ զիարդ եւ իցէ պատճառանօք յինքն գրաւել զտէրութիւնն զայն: Ուստի հրաման տայր իշխանի զօրուն ելանել, զօրաժողով լինիլ յամենայն աշխարհաց, եւ երթալ հասանիլ ի վերայ Պարսից, եւ ունիլ զքաղաքս նոցա. եւ ել նա ըստ հրամանի արքային՝ անթիւ անհամար զօրօք ի կողմանս մեծին Հայոց, որ ի վիճակին Պարսից, եւ ուր ուրեք հասանէին՝ ի սուր սուսերի սատակէին դամենայն դիմակացս իւրեանց, եւ զօրքն ամենայն դառնային բազում | աւարաւ ամ յամէ, մինչ յզփացան փարթամացան եւ լցին զամենայն քաղաքս եւ զգիւղս իւրեանց ի բազմութենէ աւարաց եւ գերեաց՝ ի Հայոց եւ ի Պարսից. բայց ո՞ր կարէ պատմել զաղէտս մարց եւ տղայոց ի ձեռաց անօրէն գերչացն, եւ զնոցին հարց եւ եղբարց անողորմ կոտորած:

18բ

Արդ՝ սոքա իբրեւ այսպէս զօրացան ի կողմանս յայնոսիկ, եւ զմայրաքաղաքն Երեւանու յետ բազում ժամանակաց պաշարմանն առին, եւ զամենայն բնակիչս ի սուր սուսերի մաշեցին: Ապա յամի Տեառն 1726ին, եւ ի թուին Հայոց հազար հարիւր եօթանասուն եւ հինգերորդին, անթիւ անհամար զօրօք միանցան յաշխարհս Սիւնեաց, եւ հասին պատեցին ի չորից կողմանց զեր-

34. Ինչպէս Բ. զլուխին համար, հոս ալ, թղ. 18ա, սկիզբը պարապ տեղ թողուած է ձեռագրին մէջ, իբր խորագրի տեղ: Չէ գրուած նաեւ բնագրին առաջին գիրը՝ Յ: Լրացուցինք առնելով Գուլամիրեանցի հրատարակութենէն (ամդ., էջ 42):

կիրն Դաւթի, զեօթնաբերդ դաւառն Ղափանու. յայնժամ ամենայն բնակիչք դաւառին առհասարակ խռովեցան սասանեցան, թողին լքին զԴաւթ, եւ զնացին մտին ընդ լծովն Օսմանցւոց: Եւ մնաց Դաւթ միայն եօթնեւտասն սպառազէն արամբ ի յանապատն Հալի ձորոյ, ուր կանդնեալ էր զանառիկ բերդն. ընդ նմա էին նաեւ երեք եպիսկոպոսունք եւ երեքտասան քահանայք, զհետ զնացին նաեւ Տէր Աւետիսն եւ Մելիք Փարսաղան՝ սակաւ ոմամբ, զի զօրքն ամենեքեան թօթափեցան ի նոցանէ: 19ա Բայց Դաւթ յայսմ ամենայնի ոչ լքաւ, ոչ կասեցաւ ի խորհրդոցն, ոչ զանդիտեաց ի բազմութենէ բարբարոսացն, ոչ դադարեցաւ ի քաջագործութեանցն եւ ոչ յուսահատեցաւ յողորմութենէ Աստուծոյ: Այլ արիարար զբերդն ամրացուցանէր, ըզհամարս բերդին առնէր, զզօրականս առ ինքն ժողովէր եւ բազմացուցանէր, եւ զամենակալն զԱստուած յօղնութիւն ինքեան կոչէր:

Արդ՝ յամենան իններորդի յետ գալստեան Օսմանցւոց ի Ղափան, որ այն հինգերորդ ամ էր գալստեանն Դաւթի, եկին հասին ի Ղափան ի Սուլտան Ահմէտէն՝ Պէքիր փաշայն, եւ Արապ Ալի փաշայն՝ բազում զօրօք, ընդ ինքեանս առեալք նաեւ զՓաթալի Ոսման Պարկուչատու. յետ այսորիկ հրաման տային ի տեղեաց տեղեաց աշխարհին ամենայն զօրաւորաց³⁵ Հայոց եւ ի տեղեաց զալ ժողովիլ անդր. եւ եկին հասին առ նոսա յամենայն կողմանց զօրքն թուրքաց՝ ընդ ինքեանս առեալք նաեւ զզօրսն Հայոց ի Գողթան դաւառէն, ի յԱգուլիս³⁶ քաղաքէն, ի յՈւրդուարայ, ի Փիսիանայ, ի Պարկուչատայ, ի Ղափանու, ի Մեղրեայ, ի Չաւնդրու, նաեւ զթուրքսն Ղարաչօուլու, եւ զնոսա որք բնակեալք էին ի Սեաւ լեռինս: Եւ զի մի՞ այլապէս թուեացի բանս այս, զսակաւս ի բազմաց ասասցուք, | եղեն իբրու վաթսուն կամ եօթանասուն հազար, եւ առաւել եւս բազում յոյժ, մինչեւ ընուլ բազմութիւն հեծելոց եւ հետեւակաց նոցա յոյժ, մինչեւ ընուլ բազմութիւն հեծելոց եւ հետեւակաց նոցա, զդաշտս եւ զլեռինս: Եւ հանդէս արարեալ ամենայն զօրացն, կարգեցան պատրաստեցան զիմեցին զալ ի վերայ Դաւթի³⁷ Պէքիրն, եւ եկին բանակեցան յայնկոյս գետոյն Հալի ձորոյ, ի յերեքտասներորդում³⁸ աւուր քառասներորդաց պահոցն: Իսկ որք ընդ Դաւթի էին զօրք, զայն ահագին բազմութիւնն յորժամ տեսանէին՝ զարհուրէին, եւ բազումք ի նոցանէ երթային առ փա-

35. Ձեռ. զօրավորաց: Ապա վրան սրբազրուած ու աւելցուած ա, փոխան վն-ին:

36. յԱգուլիս:

37. Ձեռ. Դաւիթի: Հաւանօրէն՝ սկզբնաբար Դաւթի:

38. Ձեռ. Տողադարձի վրայ հանդիպելով՝ եղած է յերեքտասներորդ-դում:

չայսն եւ անձնատուր լինէին. բայց որք քաջք եւ արիւք էին՝ խիղախէին, եւ ի մարտ պատերազմի պատրաստէին. եւ էջ բանակեցաւ սակաւուք Դաւիթ ի յամրոցէն ի շէնն, որ էր յայսկոյս գետոյն, հանդէպ բանակի նոցա. եւ առաքեաց ընդ առաջ նոցա դուռնդ մի ի զօրաց հարիւր վաթսնից՝ կալնուլ զանցս դետոյն. եւ եկին կալան եւ ոչ թոյլ տային նոցա անցանել զգետն՝ զաւուրս երկուս. բայց յաւուրն երրորդի՝ թուփանքաւորքն Հայոց, որք ընդ զօրս Օսմանցւոցն էին, անցին զգետն յայլ ուստեքէ, եւ եկին մտին կալան զմի կողմն շինին, եւ հատին ըզզօրսն Դաւիթի: Իսկ Դաւիթ եւ զօրականքն իւր՝ երեք հարիւր յիսուն արամբ մտին ամրացան ի յամուրն անապատին: Եւ էանց յայս կոյս ամենայն բանակն Օսմանցւոց, եւ մատուցեալ շուրջ պահ արկին³⁹ զբերդաւն եւ կանդնեցին զնովաւ պատնէշ, եւ անտի զգնտակս թօփից եւ թուփանկաց ի ներքս հոսէին: Եւ սոքա ի ներքուստ առ արտաքս զնոյն ի նոսին առնէին, եւ զաւուրս վեց մարտ եղեալ ընդ միմեանս կռուէին. եւ ի կողմանցն հակառակաց յաւուրն հարիւր, կամ երկու հարիւր, եւ երբեմն երեք կամ չորս հարիւր անկանէին. եւ ի սոցանէ հաղիւ մի ոք կամ երկու՝ վասն ամրութեան տեղւոյն:

Բայց յաւուրն եօթներորդի ընդ այդ ընդ առաւօտն, որք պաշարեալ պահէին զամուրն, կաղմեցան, պատրաստեցան, եւ դիմեալ մօտեցան ի պարիսպ անդր, այլ ոչ որպէս յերեկն եւ յեռանդն, զի զահաղին մեծամեծ մեքենայս (ըստ կերպի մեծամեծ սանդղոց, թուով քսան եւ վեց) ընդ ինքեանց բարձեալ բերէին, զային մերձենային, եւ ի պարիսպ անդր յեցուցանէին, եւ բազմութիւնն խուժանին յերիս խուժբա բաժանէին, եւ յերից կողմանց զրոհ տուեալ, ի մեքենայից անտի ի վերայ պարսպացն դիմէին⁴⁰: Իսկ պահապանք պարսպացն ի վերուստ անտի հարեալ զնոսա՝ ի մեքենայիցն ի վայր | թօթափէին, եւ բազմութիւնն զէշազէշ անկելոց նոցին, իբր վաղահասուկն թլուզոյ հարեալ ի սաստկութենէ կարկտի՝ զյատակս մեքենայիցն ծածկէին. եւ զայն ամենայն ոչինչ համարեալ՝ յառաւօտէ մինչեւ ցուրթերորդ ժամ աւուրն մեծաւ գոչմամբ եւ տաղնապաւ ի վերայ պարսպացն դիմէին:

Անդ էր տեսանել զայն ահեղ տեսիլ կատաղեալ զօրացն աղմուկ աղաղակին. զի⁴¹ իբր զմեքենայսն կանդնեցին, հարիւրաւոր եւ հաղարաւոր դրօշակիրքն յառաջ խաղացին, ապա զօրքն

39. Ձեռ. պահարկիմ (միացած):

40. Ձեռ. դիմէին:

41. Ձեռ. զի-ն այնպէս դրուած է՝ որ կը կարդացուի նաեւ ելի:

ամենայն զկնի հեղանէին, իբր յորձանս յորդախաղաց գետոց ահաղին գոչմամբ⁴², եւ կամ իբրու ամեհի ալիս ծովու յուղեալ ի բռնութենէ հողմոց՝ դարիւ եւ դարիւ զային, մի զմիով անցանէին, եւ ի մեքենայից անտի ի վերայ պարսպացն դիմէին եւ առ հասարակ յերկոցունց կողմանցն ձայն փողոյ, ձայն դօսերաց (sic), գոչիւն զօրաց, շառաչիւն հրալից զնդակաց, ճայթմունք հրացանից զականջս խլացուցանէին: Իսկ որք ի ներքս էին, իբրեւ զայն ահեղ տեսիլ ի յամրոցէ անտի տեսանէին զգնդաց զնդաց այլասեռիցն՝ դրօշու դրօշու պատրաստութիւն, զնշանացն փողփողել եւ զճառագայթս զինուցն զինուորաց, զզանդակսն հնչեցուցանէին, զնշխարս ձեռաց սրբոյն Մինայի ի բազմոցի դնէին, | եւ ամենեքեան անկեալ առաջի սրբոյ սեղանոյն՝ առ Աստուած գոչէին, եպիսկոպոսունք, քահանայք, ամենայն առ Աստուած գոչէին (զի անդ էր նաեւ մենաստան ինչ ժողովրդականք եւ կուսանք (զի անդ էր նաեւ մենաստան ինչ կուսանաց, ուր բնակէին քառասուն կամ յիսուն կուսանք), զի ամենեքեան զմահն առաջի աչաց ունէին:

Եւ յոթներորդ ժամու աւուրն՝ իբրեւ տեսին զի բառնիւր այնուհետեւ յոյս փրկութեան, Մխիթար սպարապետն եւ Տէր Աւետիսն խրախոյս բարձին, ի զէն յարձակեցան, ապա զօրքն ամենայն առ նոսա ժողովեցան, բացի պահապանաց պարսպացն, վառեցան պատրաստեցան, զէն զգեցան, ի բարկութիւն բորբոքեցան ամենեքեան ի վերայ թշնամեացն, զի խօսիլ սկսան ընդ քեցան ամենեքեան ի վերայ թշնամեացն, զի խօսիլ սկսան ընդ նոսա Մխիթարն եւ Տէր Աւետիսն եւ ասեն. Քաջացարուք, մի՛ երկնչիք, ելէք զհետ մեր. եթէ հասեալ⁴³ իցէ վախճան մեր՝ քաջութեամբ մեռուք. զի լաւ իցէ մեզ արութեամբ արտաքոյ պարսպացն մեռանիլ՝ քան աստէն առաջի աչաց մերոց տեսանել զմահ ընտանեաց եւ բարեկամաց մերոց եւ զայլ դժնդակուներ: Զբանսն ասացին եւ ինքեանք յառաջագոյն աճապարեթիւնս: Զբանսն ասացին եւ ինքեանք յառաջագոյն աճապարեցին ելին արտաքս ընդ գաղտնի դուռն պարսպին, եւ երեք հարիւր վառեալք զկնի նոցա:

Ո՛վ սքանչելեացս, ո՛վ մեծի ողորմութեանցն Աստուծոյ. երեք հարիւր վառեալք ի յոթներորդ ժամու աւուրն ձայն ետուռն, խրախոյս բարձին, յարձակեցան միանգամայն ի վերայ եօթանասուն հազարաց. զառաջինն յարձակեցան ի վերայ յաջակողմեան դնդի նոցա՝ յաջ եւ յահակ կոտորելով: Իսկ նոքա յանկարծակի իբրեւ տեսին զայն ահեղ յարձակումն եւ կոտորած ի վերայ ինքեանց հասեալ, առ հասարակ խուժեալք եւ խուճապեալք՝ դիմեցին յերկրորդ եւ յերրորդ խուժբան, զաղա-

42. Ձեռ. գոչմամբ:

43. Ձեռ. հասեալ է իցէ:

զնացս միոյ ժամու կամ երկուց, որոյ մի կողմ էր քարաժայռն մեծ, եւ ի միւս կողմն՝ Երասխն յորդահոս. անդ իբրեւ մտին փախստեայքն Օսմանցւոց ի կիրճն, սոքա ելին ընդ առաջ նոցա ի պատերազմ. եւ իբրեւ զայն տեսին, նեղեցան յոյժ՝ զի պաշարեալ մնացին յամենայն կողմանց, եւ ստիպեցան անցանել զգետն Երասխ. այլ սոքա ի վերայ հասին նոցա, զբազումս առետեղ սատակեցին եւ զայլ բազումս ի գետն հեղձուցին: Եւ անտի դարձ արարին, եկին հասին ի Մեղրի, եւ անդ գտին դամբաւ կառափունս Թուրքաց, զանհամար ձիս եւ զջորիս նոցա, զանթիւ զանչափ գոյս նոցա, իբր չորեք հարիւր տաղանդոյ ինչս. զրեռն հարկահանին բացին | եւ անդ երեսուն եւ երկու հազար Թուղթս հարկաց գտին, եւ զայն ամենայն ի հուր այրեցին: Եւ զՌաշեաց Նորվէլն գտին, եւ զի ուրացեալ էր զՔրիստոս՝ զգլուխն հատին:

Ապա յետ այսորիկ իբրեւ սակաւ ինչ ժամանակ ի վերայ անցանէր, ասպատակիչ փաշայն Օսմանցւոց բազում զօրօք դիմէր գայր, եւ բնակէր ի Բեխ կոչեցեալ շէնն, իբր գաւառս միոյ շարաթու. զբազում հնարս խորհէր ի վերայ Դաւթի եւ զօրաց նորա, եւ ամենեւին զոչինչ կարաց առնել. այլ զօրականքն Դաւթի ի գիշերի միում ի վերայ հասին նոցա, հարին կոտորեցին զբազումս ի նոցանէ, եւ գիւղայն հալածականս արարին:

Յետ այսորիկ գունդ մի զօրաց ութն հարիւրոց ի Պարկուշատ եկին, զի զնասցեն անտի ի Տաթեւ. եւ սոքա իբրեւ զայն զդացին, զգիշերայն ի Օքուղեարաթ կոչեցեալ լեառն ելանէին եւ զանցս ճանապարհին ըմբռնէին: Իսկ նոքա ընդ այդն ընդ առաւօտն իբրեւ եկին անդր հասին, սոքա ի վերայ յարձակեցան, հարին կոտորեցին ի նոցանէ երեսուն եւ վեց այր, զեօթն այր եւս գերեցին, եւ առին զամենայն ինչս նոցա եւ դարձան ի Հալի ձոր:

Ի Հայրի ձոր:

Ապա այլ եւս զօրք Օսմանցւոց եկին բանակեցան⁴⁷ Ի գիւղ մի Թուրքաց՝ մերձ Ի Մանլեւ, զնոսա եւս՝ Ի գիշերի Ի վերայ հասին՝ կոտորեցին եւ միայն զերկուս Ի նոցանէ կենդանի ածին Ի Հայրի ձոր:

24բ Արդ՝ յամի Տեառն 1727ին, որ այն Հինգերորդ ամ էր զալլատեանն Դաւթի ի Ղափան, իբրեւ տեսանէր Դաւիթ Պէկն՝ ողորմութեամբն Աստուծոյ՝ յամենայն ուրեք ղթշնամիսն առաջի իւր վանեալս եւ խորտակեալս, առաքեաց Շահթամազ արքային Պարսից զչորս բեռինս գլխովք սպանելոց ի բաղմութենէ կոտորածին, զորս հասուցին Օսմանցոց. եւ նա իբրեւ զայն

տեսանէր՝ ուրախ լինէր յոյժ ի վերայ Թշնամեացն իւրոց, եւ զարմանալոյ յոյժ ի վերայ քաջութեանցն Դաւթի՝ եւ զօրավա-
րաց նորա, զընծայս պարգեւէր, հրովարտակս գրէր առ նա՝
ըստ բանիցս ըստ այսոցիկ.

«Շահութամաղ արքայ Պարսից՝ առ քաջը Դաւիթ Պէկ, եւ առ քաջ զօրավարսդ Հայոց՝ որք ընդ քեզ են, ողջոյն: Ի բազմաց բազում անգամ աղդ եղեւ մեզ զքաջութեանց քոց. բայց արդ իբր ականատես իսկ եղեալ մեր դձերոց մեծամեծ քաջութեանց՝ որ ընդդէմ թշնամեացն մերոց, ահա՛ արդ կացուցի զքեզ իշխան եւ դուռն ամենայն իշխանաց մերոց, որք են ի կողմանսդ յայդոսիկ. եւ երկիրդ Ղափան՝ զոր կալար քաջութեամբ, քեզ լիցի. բայց դու ելցես եւ ժողովեսցես առ քեզ զամենայն զօրս եւ ղիսանս ի կողմանցդ յայդոցիկ, եւ ի բաց հանցես զՕսմանցին ի սահմանաց քոց»:

25ա Եւ ետ քերել նմա զմի խաչվառ* եւ զմի պատուական նոյոյ՝
 ձի, նաեւ զիշխանութիւն կարող | լինելոյ դրամ հատանել, եւ
 իւրաքանչիւր զօրապետաց նորա զմի մի պատմուճան առաքեաց :
 Եւ եկին Հնաղանդեցան նմա ամենայն իշխանք եւ դաւառապետքն
 Թուրքաց :

Եւ ել զնաց Դաւիթ ի Հալիժորոյ ի Մեղրի, եւ բանակեցաւ անդ.՝ եւ ժողովեալ առ ինքն զամենայն զօրսն Մեղրեայ եւ Չաւընդրու, անտի խաղաց զնաց եւ բանակեցաւ ի Կրճէվան աւանն, եւ Հանդէս արարեալ անդ. ամենայն զօրացն՝ առաքեաց զնոսա ի ձեռն քաջ զօրապետացն ի վերայ Ուրդուար քաղաքի։ Եւ զնացին Հասին անդ, եւ ի Ժամ գիշերոյ՝ ի մէջ քաղաքին յարձակեցան, հարին կոտորեցին յՕսմանցւոցն երեք հարիւր այլ, եւ մնացեալքն ելին փախեան ի քաղաքէն եւ զնացին ի դիպուկ ինչ տեղի՝ արտաքոյ քաղաքին՝ բանակ առեալ բանակեցան։ Եւ սոցա առեալ զաւարն՝ արկին սեղանս, զի կերիցեն եւ արբցեն. յայնժամ դայ ի վերայ հասանի նոցա Դաւիթ Պէկն մինչդեռ բազմեալ էին զօրավարքն ի սեղան, եւ ցասուցեալ ի վերայ նոցա՝ ասէ. Թշնամիքն ձեր արտաքոյ քաղաքիս բանակ առեալ բանակին, եւ դուք նստեալ աստ ուտէք եւ ըմպէք։ Եւ առժամայն թողեալ զուտեին՝ հեծան կաղմեցան եւ յարձակեցան, ի վերայ | բանակի Օսմանցւոցն. իսկ նոքա իբրեւ տեսին՝ գիտացին թէ զօրն Պարսից է, եւ ելին ընդառաջ՝ ի մարտ պատերազմի. բայց իբրեւ զփորձ առին եւ գիտացին թէ այն է զօր Դաւիթ Պէկին, ի փախուստ դարձան եւ զնացին. եւ սոքա առին զնոցանէ⁴⁶ զբազում ջոկս ձիոց եւ ջորեաց, եւ առաքեցին զայն

*) 26n. խաչվար: 48. 26n. զբնոցանէ:

47. Ձեռ. բանկեցան (sic):

ամենայն առ Դաւիթ. եւ ինքեանք զիմեն դան ի Դէշտ կոչեցեալ աւանն: Իսկ արքա աւանին ի հեռուստ իբրեւ զգալ զօրացն տեսին, համարեցան թէ զօր աշխարհեաց է այն, եւ փախեան ի յԱգուլիս: Եւ անտի չուեն դան Միսիթար սպարապետն եւ տէր Աւետիսն հանդերձ զօրուն ի յԱգուլիս քաղաք. իսկ պահապանք մեծ դրան քաղաքին, ընդ տեսանէն զսոսա՝ փախչին. եւ սոցա համարձակ մտեալ ի քաղաքն, երթան ի վաճառատեղն՝ առ ի յոյզ եւ խնդիր առնել զՕսմանցիսն⁴⁹, եւ գտանեն անտի փախուցեալ զհարկահանսն⁵⁰ Օսմանցւոց, եւ ինքեանք երթան բանակին ի վանս սրբոյն Թովմայի առաքելոյն. եւ մինչ զեռ անդէին նոքա՝ լուան արտաքոյ աղմուկ չփոթի, եւ երկու ոմանք ի սոցանէ ձի կալան եւ ելին արտաքս եւ զնացին, զի ոմն ի Թուրքաց յափշտակեալ զմի ոմն զերի վարէր, եւ պնդեցան զհետ

26ա նորա, | եւ նորա թողեալ զգերին՝ փախեալ:

Արդ՝ սակաւ ինչ կացեալ անդ, տեսին ի գիտանոցէն՝ զի Դաւիթ Պէկն եւս զայր մտանէր ի քաղաքն, եւ ելին ընդ առաջ նորա. եւ զգեցոյց նա իւր զօրականացն զմի մի պատմուճան, եւ դարձան վերստին բանակեցան ի սուրբն Թովմայ. եւ արքա քաղաքին՝ ըստ սովորութեան իւրեանց՝ ամենեքեան զայլին եւ զձեռան Դաւիթ Պէկն համբուրէին: Եւ Մելիք Մուսին, որ նա ինքն քաղաքապետն էր, իբրեւ զայր յանդիման լինէր՝ Դաւիթ հրաման տայր իւրոցն եւ ասէր. Ի դիշերիս յայսմիկ հատէք զգլուխն Մուսեայ. զի այր նենդաւոր էր նա եւ խարդախ. բայց մելիք Փարսադայն յառաջ մատուցեալ՝ բարեխօս լինէր վասն նորա, եւ զվճիռ մահուն դարձուցանէր:

Եւ մնացեալ սոցա ի քաղաքի անդ, ի միջոցի տասն աւուրց՝ երիցս անդամ յարձակեցան ի վերայ նոցա զօրքն Օսմանցւոց, եւ երիցս խորտակեցան ի քաջամարտիկ զօրացն Դաւթի:

Յետ այսորիկ արքայն Պարսից հասոյց ի թիկունս Դաւթի զերիս խանս, եւ վերստին զիմեաց Օսմանցին, եւ միւսանդամ խորտակեցաւ եւ ի փախուստ դարձաւ: Եւ այս ամենայն պատահէր նոցա յայն սակս, զի իշխանքն | Ագուլեցւոց ծածկապէս

26բ դաշնադիրք էին ընդ Օսմանցւոց, եւ սոքա ոչ գիտէին:

Ապա յետ երկուց աւուրց եկին հասին բաղմութիւն զօրացն Օսմանցւոց, եւ լցին զգալուն Մարադու, եւ անդ բաժանեցան յերիս առաջս. իսկ որք ընդ Դաւթի էին՝ նոքա եւս յերիս առաջս բաժանեցան. խանքն Պարսից ի մի կողմն, եւ զօրքն հայոց ի միւս կողմն. իսկ տէր Աւետիսն՝ հանդերձ զօրուն՝ գի-

49. Ձև. գօսմանցիմն:

50. Ձև. գիարկահանն (sic):

պեցաւ ի կողմն Երասխու: Արդ՝ իբրեւ խմբեցան ի պատերազմ, խանքն Պարսից ի փախուստ դարձան յերեսաց Օսմանցւոց, բայց զօրքն հայոց պինդ կացին, հարին սատակեցին զբաղումս ի Օսմանցւոց, եւ զայսն ի փախուստ դարձուցին: Ապա դարձան, զկնի խանիցն պնդեցան, հասին նոցա, (մինչդեռ փախստեայ երթային նոքա ի Թավրէզ), եւ զամենայն զօրս նոցա ի յԱգուլիս դարձուցին. բայց խանքն փախեան, եւ սոքա զնացին՝ աւար առին զտունս նոցա, եւ զտիկնայս նոցա՝ հանդերձ ութեւտասան աղախնեօք եւ չորս ներքինեօք՝ զերի վարեցին ի Հալի ձոր:

Արդ՝ յետ այսորիկ իբրեւ երկու աւուրք ի վերայ անցին, արքն Ագուլիսի եւ մելիք Մուսին զթշնամութիւնս եւ զգաւա-

27ա ճանութիւնս իւրեանց յայտ արարին, զի ի մէջ քաղաքին | զորոտուեալ՝ ի վերայ զօրացն Դաւթի գիմեցին, մինչդեռ ի վանս սրբոյն Թովմայի էին նոքա՝ արտաքոյ քաղաքին, եւ ի քաղաքէ անտի սկսան զհրացանս արձակել ի վերայ նոցուն. այլ սոքա խնայեցին ի նոսա, վասն զոլոյն համազգային, եւ զի ոչ կամէին մտանել յարիւն այնքան քրիստոնէից. վասն զի ի քաղաքի անդ էին աւելի քան զտասն հազար տուն հայոց. ուստի եւ արտաքս մելիք Փարսադան, եւ ասէ ցարսն քաղաքին. Արք եղբարք, հանդարտ լերուք, մի՛ եւս արձակէք հրացանս, թոյլ տուք զի ելցէ տէրն մեր արտաքս եւ զնասցուք աստի, եւ ձեզ տուք զի ելցէ տէրն մեր արտաքս եւ զնասցուք աստի, եւ ձեզ ոչինչ մեղիցուք: Այլ նոքա առաւել եւս վատթար զոլով, հարին եւ անդէն զմիջոցն խաղաղութեան՝ մինչդեռ խաղաղութեան բանս բարբառէր՝ սպանին զնա, որ եւ զտէրն նոցա զմելիք Մուսին ի մահուանէ ապրեցոյց: Այլ որք ընդ Դաւթի էին, իբրեւ զայն տեսին, գիտացին զի վճարեալ էր այնուհետեւ հարութիւն նոցա. քակեցին զմի կողմն պարսպի վանացն, եւ անտի չուեցին զնացին եւ ի գիւղ մի Թուրքաց հասին, եւ զտին անդ զբաղում ինչս Ագուլեցւոց՝ զձիս, զջորիս եւ զհազար երեք հարիւր ոչխարս սպանդանոցի, եւ զայլ ինչս նոցա անտի առին եւ զնացին ի Մեղրի:

27բ Եւ յետ երկուց աւուրց՝ զօրականքն Դաւթի միւսանդամ ի յԱգուլիս արշաւեցին եւ եկին՝ որ ինչ էր նոցա արտաքոյ քաղաքին՝ զամենայն առին, եւ մօտեալք ի քաղաքն՝ յերկուց կողմանց հուր արկին, զի թերեւս ելցեն արտաքս առ ի մարտնչիլ, զի ոչ կարէին հանդուրժել չարեացն եւ դաւուն՝ զոր նոքա արարին: Եւ իբրեւ ոչ ելին արտաքս առ նոսա, առին զաւարն եւ զնացին ի Մեղրի, եւ անտի դարձան ի Հալի ձոր եւ անդ օթեւանս կալան:

Եւ յաւուրսն յայնոսիկ՝ Դաւիթ Պէկն առաքէ զտէր Աւե-

տրին առ զօրականսն որք էին ի Չավնդուր, եւ նորա մերժեն զԴաւիթ եւ ոչ ընդունին զրանս նորա: Եւ նա դառնայ զայ առ Դաւիթ եւ զապստամբութիւնն նոցա յայտ առնէ նմա, եւ թէ որպէս կացուցեալք են ի վերայ ինքեանց զոստիկանս Օսմանցւոց: Յայնժամ հրաման տայ Դաւիթ չորեքտասան զօրագլխաց իւրոց երթալ կալնուլ եւ զնոսա կապեալս առ ինքն ածել. եւ ելին կաղմեցան պատրաստեցան, ձի հեծան եւ զնացին հասին, հարին զնոսա, եւ կալան կապեցին զօրավարսն եւ զՕսմանցի ոստիկանն նոցա, եւ ածին կացուցին զնոսա ի Հալի ձոր առաջի Դաւթի: Եւ իբրեւ յանդիման եղեն նորա, յառաջ մատուցեալ աղաչէին, երդմունս եւ զաշինս զնէին եւ | ասէին. Այսուհետեւ քեզ հնազանդիմք մինչեւ ցմահ: Եւ հաւատացեալ Դաւթի՝ արձակեաց զնոսա ի կապանաց, եւ զերկու զօրավարս առ ինքն եթող, եւ զայլսն ետ ի ձեռս տէր Աւետիսն⁵¹, զի լինիցին ի ներքոյ հրամանաց նորա: Եւ նորա առեալ զնոսա ի Չավնդուրն, եւ արձակէ զիւրաքանչիւրն ի տունս իւրեանց:

28ա

Եւ յետ այսորիկ Բաթալի խանն եւ զօրքն Օսմանցւոց, ի գիշերի միում դան եւ հարկանեն զերիս գիւղս Հայոց, եւ կալեալ զերիս զօրապետս՝ ածեն ի Պարկուշատ: Եւ իբրեւ զայն լսէր տէր Աւետիսն՝ վաղվաղակի զօրսն ժողովէր, եւ յետ երկուց առուրց յերկիրն Պարկուշատայ արշաւէր, եւ գիշերայն ի վերայ հասանէր, հարկանէր զհարուածս մեծամեծս, եւ զերկու թուրք զօրապետս ձերբակալ առնէր, եւ զամենայն ինչս եւ զըստացուածս նոցա յաւար ածէր ի Չավնդուր:

Եւ եղեւ ի ժամանակի յայնմիկ հիւանդանալ Դաւթի եւ մեռանել իսկ խաղաղութեամբ ի տան իւրում՝ ի Հալի ձոր, յամի Տեառն 1728ին, եւ ի թուին Հայոց ՌՃՀէ, կեցեալ ամս վեց յիշխանութեան իւրում ի Ղափան:

28բ

Արդ՝ իբրեւ վախճանեցաւ Դաւիթ Պէկն, զօրականքն միաբանեալք՝ կացուցին ինքեանց իշխան եւ գլուխ զՄխիթար ըստ պարապետն Դաւթի. | բայց զի յետոյ եղեն անմիաբանք եւ տարաձայն յիրերաց (որ է քակտիչ եւ ապականիչ ամենայն հարաւորութեանց), ուստի զօրացան ի վերայ նոցա Օսմանցիքն. եւ զկնի միոյ ամի՝ հասին պաշարեցին զրբրդն Դաւթի⁵² բաւում զօրօք: Եւ անկաւ խռովութիւն մեծ ի մէջ զօրականացն որք ընդ Մխիթարայ էին՝ ի բերդ անդր, եւ առաքեցին երկու ոմամբ զտէր Աւետիսն առ փաշայն Օսմանցւոց, խօսիլ զխաղաղութիւն ընդ նոսա. եւ իբրեւ զնացին առ նոսա, նորա հա-

51. Ձեռ. Աւետիսն:

52. Ձեռ. Դաւիթի:

ձեցան հաւանեցան, զերդմունս երդուան՝ ամենեւին ոչինչ մեղանչել նոցա, եւ պահեցին առ ինքեանս զտէր Աւետիսն. եւ սորա եւս յանձն առին ի վաղիւ անդր բանալ նոցա զբերդին դուռն, եւ ի նմին գիշերի փախեաւ Մխիթարն ի պարսպէ բերդին. եւ յորժամ այդ եղեւ՝ բացին նոցա զդուռն: Այլ անօրէն զօրքն Օսմանցւոց իբրեւ ի ներքս մտին, մերժեցին անարդեցին զերդմունս եւ զղաշինս փաշայնցն, եւ զամենայն այր զօրաւոր կոտորեցին եւ զկանայս եւ մանկունս գերի վարեցին, ի մենարանս կուսանացն մտին եւ զամենեւեան գերեցին. ապա զպարսպս բերդին քանդեցին կործանեցին, հարթ եւ յատակ արարին, եւ առին զկին եւ զորդիսն Մխիթարայ եւ զամենայն որ ինչ էր անդ, եւ թողին զնացին:

29ա

Բայց զտէր Աւետիսն փաշայն եթող ի Հալի ձոր: Եւ իբրեւ նորա չուեցին անտի, այլ զօրք Օսմանցւոց անդր հասին, որք իբրեւ կամեցան ունիլ եւ սպանանել զնա, նա փախուցեալ ի նոցանէ՝ անկաւ առ փաշայն, որոյ հրամանաւն առեալ զընտանիս իւր՝ զնաց բնակեցաւ ի Գաղատիայ: Եւ էառ զներումն ի սրբազան Հայրապետէն Հոռմայ⁵³:

Այլ Մխիթարն փախուցեալ ի նոցանէ՝ երթայր վերստին զօրաժողով լինէր ի Հայոց եւ ի Թուրքաց⁵⁴, զօրսն Օսմանցւոցն խորտակէր եւ առնոյր զվրէժ ի նոցանէ. զբաղում ամուրս եւ զքաղաքս ի նոցանէ թափէր, եւ երթայր զՈւրդուար քաղաք պաշարէր, եւ իբրեւ զըռամբ ածէր զայն ի նոցանէ՝ զամենեւեան ի սուր սուսերի սատակէր, եւ զաւար բաղում առնոյր ի նոցանէ, եւ զհարկւր վաթսուն բեռինս ուղտուց: Եւ անտի դարձ առնէր եւ երթայր ժամանակ ինչ ի մեծ բերդն Խնծորէսք բնակէր, եւ անդ յիւրոցն հարեալ թօփով՝ մեռանէր յամի Տեառն

53. Գուլամիրեանցի հրատարակութեան մէջ (էջ 69-70), Տէր Աւետիք քահանան Երուսաղէմ կ'երթայ՝ ապաշխարելու, եւ ներում կը ստանայ Հայոց Պատրիարքէն՝ համաձայնութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Իր ծանօթագրութեանց մէջ, Գուլամիրեանց կը քննադատէ Հ. Միքայէլ Չամչեանը՝ որ Տէր Աւետիքը կը տանի Գաղատիա (Էնկիւրի) եւ ապա Արեւմուտք, ուր ներում կը ստանայ Հոռմի Սրբդ. Պապէն (համատ. Հ. Մ. ՉԱՄՉԵԱՆ, Պատմութիւն Հայոց, հտ. Գ. գլուխ ԽԸ. տպ. Վենետիկ 1786, էջ 800): Բաֆֆի ալ, իր «Դաւիթ Բէկ» վէպի վերջաւորութեան, խտորէն կը խորձէ Հ. Մ. Չամչեանը, մինչեւ իսկ մոլեռանդութեան վերագրելով՝ Հոռմէն ներում խնդրելու արարքը (ամդ, տպ. Թիֆլիս 1890, էջ 762-763): Լէօ եւ Օրմանեան լուծութեամբ կ'անցնին այս հարցին վրայէն: Տե՛ս այս մասին նաեւ Արսէն Եսս. Ղլգճեանի տեսութիւնը եւ փաստերը՝ ի նպատակ Չամչեանի վարկածին (տե՛ս «Բաղմ.» ձլ. 1972, թ. 2-3, էջ 243-244): Համեմատէ նաեւ մեր հրատարակած բնագիրը (տե՛ս «Բաղմ.» ձլ. 1977, թ. 1-2, էջ 322, ծնթ. 19):

54. Ձեռ. Թուրքաց:

ԲԱՅՅԻ (ՅԱԿՈԲ ՄԵԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆ), Խամսայի մելիքությունները (1600-1827).
Նիւքեր Հայոց նոր պատմության համար, Թիֆլիս 1882, տպ. Կոլլըն. (ար-
տատպում «Մշակ» թերթին), էջ 414+XLVI (յատկապէս՝ էջ 1-57):

ԲԱՅՅԻ (ՅԱԿՈԲ ՄԵԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆ), Դաւիթ Բէկ, տպ. Թիֆլիս 1890, էջ 762-763
(Տէր Աւետիք քահանայի վախճանին մասին):

Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ, Սիսական, տեղագրություն Սիւնեաց աշխարհին, Վենետիկ -
Ս. Ղազար 1893, էջ 563 (յատկապէս՝ էջ 212, 254-264, 300-301, հւն...):

Լ. ԲԱՐԱՍԵԱՆ, Պրոֆեսոր Հեյգելը եւ մի հատուած Հայոց պատմությունից (Լ.
Բարսեան կատարած է նաեւ Հեյգելի այդ աշխատասիրութեան հայերէն թարգ-
մանութիւնը), «Արձաղանք» (Թիֆլիս), 1894, թիւ 75:

Հ. Գ. Գ. (Հ. ԳԱՐԵԳԻՆ ԳԱՐԱՆՅԻԼԵԱՆ), Իսրայէլ Օրիի մասին, «Հանդէս ամսոր-
եայ», (Վիեննա), ԺԱ. (1897), Թ. 1, էջ 26-27:

KARL-THEODOR HEIGEL, *Geschichtliche Bilder und Skizzen*, München
1897, pp. 37-57 (Այսպէս յիշուած՝ Maurice Muretի յօդուածին մէջ, տե՛ս
ստորեւ):

PAUL CAMBON, *Introduction au Livre jaune sur les affaires d'Arménie*,
1897 (Այսպէս յիշուած՝ Maurice Muretի յօդուածին մէջ, տե՛ս ստորեւ):

MAURICE MURET, *Un projet de croisade arménienne en 1700* (Իսրայէլ
Օրիի մասին), «Bibliothèque universelle et Revue suisse» (Lausanne),
CIII, Tome X (N° 29, Mai 1898), pp. 295-316.

ՄՕՌԻՍ ՄԻՒՌԻՆԷ, Հայաստանը ազատելու ծրագիր մը՝ 1700ին (Թարգմանութիւնն է
նախորդ յօդուածին), «Նոր Կեանք» (Լոնտոն), Ա., թիւ 17 (1 Սպտ. 1898),
էջ 265-270:

ЭЗОВЪ Г. А. «Сношения петра великаго съ армянскимъ народомъ,
Документы», Санктпетербургъ, Тип. Импер. Академии Наукъ 1898,
էջ XVI+CXIX+512:

ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑԵԱՆՑ, Կ. Եգեան՝ «Պետրոս Մեծի յարաբերությունները Հայոց ազգի
հետ» (գրախօսական), «Ազգադրական Հանդէս» (Թիֆլիս), Գ. տարի, Գ. գիրք
(1898), Թ. 2, էջ 293-313:

ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. - Կ. Ե. Եգեան՝ «Պետրոս Մեծի յարաբերությունները Հայոց հետ» (գրա-
խօսական), «Արարատ» (Վաղարշապատ), ԼԱ. (1898), Թ. 11-12, էջ 536-543:

Ա. Ա. - Եգեան Կ. Ա.՝ «Պետրոս Մեծի յարաբերությունները Հայոց ազգի հետ» (գրա-
խօսական), «Մուրճ» (Թիֆլիս), Ժ. (1898) Թ. 9, էջ 1264-1274:

Ա. ՄԵՍԵՆ, Կ. Եգեան՝ «Մեծն Պետրոսի յարաբերությունները հայ ժողովուրդին հետ»
(գրախօսական), «Անահիտ» (Փարիզ), Ա. (1899), Թ. 9-10 (Յուլիս-Օգոստոս),
էջ 306-309:

Ա. Ա. (Թրգմ. Պետրոս Զաքարեանց), Կ. Ա. Եգեան՝ «Պետրոս Մեծին յարաբերու-
թյունները Հայ ազգին հետ» (գրախօսական), «Հանդէս ամսորեայ» (Վիեննա),
ԺԲ. (1898), Թ. 12, էջ 380-381:

ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ Խ. - Կ. Եգեանի «Ռուսաց կայսեր Մեծն Պետրոսի յարաբերութիւն-
ները Հայոց ազգի հետ» (գրախօսական), «Բազմալէս» (Վենետիկ - Ս. Ղազար),
ԾԶ. (1898), Թ. 12, էջ 580-583:

Ն. ԳԱՐԱՄԵԱՆ, Կ. Եգեան՝ «Պետրոս Մեծի յարաբերությունները Հայոց ազգի հետ»
(գրախօսական), «Լուսմայ» (Տիֆլիս), Գ. (1899), Գիրք Ա. (Յունուար), էջ
229-263:

ԵՐՈՒԱՆԴ ԼԱԼԱՅԵԱՆ, Սիսիան (Նիւքեր՝ ազգայ ռուսամասիրութեան համար),
«Ազգադրական Հանդէս», Գ. տարի, Գ. գիրք (1898), Թ. 1, էջ 105-270:

***, Ղարաբաղու, Նախիջեւանի եւ Շամշադնի Մելիքները (պատմական վաւերա-
թուղթեր), «Լուսմայ» (Տիֆլիս), Ե. տարի (1900), Գիրք Ա. էջ 291-294:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ, Մագումմ Դաւիթ Բէկի, «Բանասէր» (Փարիզ), Գ.
(1902), Թ. 12, էջ 381-382:

ԵՐՈՒԱՆԴ ԼԱԼԱՅԵԱՆ, Նախիջեւանի գաւառ: Ա. Մասն, Գոգքն կամ Օրդուբադի
նստիկանական շրջան, «Ազգադրական Հանդէս», Թ. տարի, ԺԱ. գիրք (1904),
էջ 241-334:

ԵՐՈՒԱՆԴ ԼԱԼԱՅԵԱՆ, Զանգեզուրի գաւառ, կտպան կամ Ղափան: Պատմական հա-
մառու տեսութիւն, «Ազգադրական Հանդէս», Թ. տարի, ԺԲ. գիրք (1905),
էջ 175-202:

ԱՐՄԵՆ ՎՐԴ. ՂԼԻՃԵԱՆ, Նիւքեր Դաւիթ Բէկի պատմութեան վերաբերեալ, «Արա-
րատ», ԼԸ. (1905), Թ. 4, էջ 382-387:

ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԲԱՐԵՈՒԴԱՐԵԱՆՑ, Պատմութիւն Ազունից, հտ. Բ. Թիֆլիս, տպ.
Օր. Ն. Աղանեկեանցի, 1907, էջ 192 (յատկապէս՝ 70-93):

ASCHOT JOHANNISSJAN, *Israel Ory und die armenische Befreiungsidee*,
München, Druck M. Müller & Sohn, 1913, pp. 167.

Յ. ՏԵՐ ՅԱԿՈԲԵԱՆ, Մոնցուած շիրիմ (Մելիք Փարսադան), «Հանդէս ամսորեայ»
ԻԷ. (1913), Թ. 5, էջ 302-307:

Հ. ԵՍԱՅԻ ՏԱՅԵՑԻ, Իսրայէլ Օրի՝ տասնութերորդ դարու հայ ազգին ազատութեան
ռահվիրան, «Բազմալէս», ՀԲ. (1914), Թ. 1, էջ 27-32:

Հ. ՄՈՒՍԱՅԵԼԵԱՆ, Ղարաբաղի նուաճման հարկը մեծապէս (1813 թ. 12 Հոկտ. -
1913 թ. 12 Հոկտ.), «Արարատ», ԽԸ. (1914), Թ. 2, էջ 144-160:

ԱՇՈՏ ՀԱՅՈՒՄԵԱՆ, Նիւքեր ազգային պատմութեան, «Արարատ», ԽԸ. (1914), Թ.
4, էջ 371-376:

ԵՂԻՇԷ ԲԷՆՑ. ԳԵՂԱՄԵԱՆՑ, Իսրայէլ Օրին եւ իր քաղաքական ծրագիրը, Բազու
1914, էջ 79:

ՄԱՂԱԳԻԱ ԱՐԳՍ. ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատմութիւն, Մասն Բ., Կ. Պոլիս 1914, հտ.
Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, սիւնք 1601-3376 (յատկապէս Թ. 1797, 1843-1846,
1899-1900, 1941, 1955-1956, որ է ս. 2620, 2684-2692, 2771-2775, 2837-2839,
2858-2862):

ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ. (ՏԵՐ-ՄԿՐՏԵԱՆ), Նիւքեր հայ մելիքութեան մասին. պրակ Բ.
Դոփեանք եւ Մելիք Շահնազարեանք, էջմիածին 1914, էջ 182:

Ե. ԳԵՂԱՄԵԱՆՑ, Հայերի ազատագրական շարժումները ԺԸ. դարում, Բազու 1915:

ԱՇՈՏ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Նիւքեր հայ մելիքութեան մասին. Բ. պրակ. Դոփեանք
եւ Մելիք Շահնազարեանք՝ Կարապետ Եղսկի, (գրախօսական), «Արարատ»
ԽԹ. (1915), Թ. 9-10, էջ 788-792:

ԱՇՈՏ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Յակոբ Զուլայեցու մի գրութիւնը ռուս արքունիքին,
«Արարատ», ԽԹ. (1915), Թ. 9-10, էջ 775-781:

ԱՇՈՏ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Պետրոս Դի Սարգիս Գիւմնեց (Պատմական կենսագրական
ակնարկ), «Արարատ», Ծ. (1916), Թ. 1-2, էջ 105-125 (Յաւելուած՝ Միմա
Վրդի գեղարու մը կատարին Ա. կայսրուհուն՝ Գիւմնի Հայերի մասին, աւել,
էջ 125-128):

- ԱՇՈՏ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Հայ-ռուս օրինադրական ծագման խնդիրը, *Էջմիածին*, 1921:
- ՀՐ. ԱՃԱՌԵԱՆ, վաւերագրեր հայ պարսկական յարաբերութեանց մասին, *Երեւան* 1927:
- Ն. ԱԴՈՆՅ, «Դաւիթ Բէկ» վեպի պատմական հիմքը եւ գաղափարախօսական արժէքը, «Րաֆֆի» (լոյս տեսած՝ Րաֆֆիի ծննդեան հարիւրամեակին առիթով, յորհրդանշի կազմակերպիչ Յանձնախումբին կողմէ), Փարիզ 1937, տպ. խ. Մաթիկեան, էջ 122-148:
- Հ. ԵՂԻԱ ՓԻՉԻԿԵԱՆ, «Դաւիթ Բէկ»ի պատմութեան աղբիւրները եւ Մխիթարեանի, «Քաղմովէպ», ՂԶ. (1938), թ. 6-9, էջ 172-187:
- ԱՐԱՐԱՆՍԱՐ ԵՐԵՄԻԱՆՅԻ, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թ., *Երեւան*, Արմֆանի Հրատ. 1938, էջ 108:
- Ա. ԱՐԱՆՍԱՐԵԱՆ, Գ. ԳԱՐԻԲԵԼԵԱՆ, Նոր փաստաթուղթ Դաւիթ Բէկի մասին, «Սովետական դրականութիւն» (*Երեւան*), 1942, թ. 4, էջ 129-131:
- ԼԼՕ (ԱՌԱՔԵԼ ԲԱՐԱՆՆԵԱՆ), Հայոց Պատմութիւն, Գ. հատոր, Բ. դերք, Ա. մաս, Ազատագրական շարժումներ, Գլուխ Ա-Դ. տպ. *Երեւան*, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1946, էջ 491-699: (Տե՛ս նաեւ Երկերի ժողովածու, *Երրորդ հատոր*, *Երեւան*, «Հայաստան» Հրատ. 1973, էջ 7-209, ծնթ. 23-27, էջ 601-605):
- Ա. ԱՐԱՆՍԱՐԵԱՆ, Նոր վաւերագրեր Պետրոս Մեծի ժամանակաշրջանի հայ-ռուս բարեկամական յարաբերութիւնների մասին, «Էջմիածին», Գ. (1946), թ. 2-3, էջ 59-70:
- Ա. ՄԻՐՁՈՅՆԵԱՆ, Հայ ազատագրական շարժումները Սիւնիքում (1722-1730 թթ.), *Առանձնատիպ Հայաստանի Պետ. Պոմ. Թանգարանի «Աշխատութիւններ»-ու Բ. հատորէն*, *Երեւան* 1950:
- Ա. ԱՐԱՆՍԱՐԵԱՆ, Նորայայտ վաւերագրեր հայ-ռուսական յարաբերութիւնների պատմութեան համար: - Իսրայէլ Օրու եւ Միմա վարդապետի նորայայտ վաւերագրերը, «Էջմիածին», Է. (1950), թ. 11-12, էջ 70-75:
- Ա. ԱՐԱՆՍԱՐԵԱՆ, Նոր վաւերագրեր Դաւիթ Բէկի ու նրա զինուորած ազատագրական շարժման մասին, «Տեղեկագիր» ՀՍՍՌ ԳԱ-ի, 1951, թ. 8, էջ 70-71:
- Ա. ԱՐԱՆՍԱՐԵԱՆ, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների եւ հայ-ռուսական յարաբերութիւնների պատմութիւնից, *Երեւան*, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1953, էջ 280 (Վաւերագրեր՝ էջ 141-262):
- Յ. ՔԻԻՐՏԵԱՆ, Իսրայէլ Օրի (*Կեանքը եւ դործը*), «Հայրենիք» (ամսագիր, Պոսթըն), ԼԳ. (1955), թ. 12, էջ 97-101, ԼԳ. (1956), թ. 1, էջ 70-78, թ. 2, էջ 79-86, թ. 3, էջ 72-80, թ. 4, էջ 79-86:
- Յ. ՔԻԻՐՏԵԱՆ, Համբաւունք «Վաւերագրութեան» (Անդրկովկասի ժողովին եւ Իսրայէլ Օրիի մասին), «Հայրենիք» ԼԵ. (1957), թ. 5, էջ 80-96, թ. 7, էջ 110-112 (Ո՞վ էր Տէր Ներսէսը):
- Վ. ՈՍԿԱՆԵԱՆ, Յ. ՔԻՐՏԵԱՆԻ «Իսրայէլ Օրի» յղումաշարի առիթով, «Պատմա-բանասիրական Հանդէս» (ՀՍՍՌ ԳԱ, *Երեւան*), 1958, թ. 2, էջ 287-293:
- Ս. Տ. ԵՐԵՄԵԱՆ (Եւ ուրիշներ), Հայ ժողովրդի պատմութիւն, Ա. մաս, *Երեւան*, Հայկաժողովական Հրատ. 1958, էջ 424 (յառկայէս՝ էջ 349-374):
- ԱՇՈՏ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, Գրք Բ. *Երեւան*, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1959, էջ 696:
- Յ. ՔԻԻՐՏԵԱՆ, Իսրայէլ Օրի (Պատմաբանական ուսումնասիրութիւն), *Վենետիկ - Ս. Ղազար*, 1960, էջ 216:

- Վ. ԴԻԼՈՅՆԵԱՆ, Մի նորայայտ նկարի մասին (*Ներկայացուած են Իսրայէլ Օրին եւ Միմա վերջ*), «Պատմա-բանասիրական Հանդէս» (ՀՍՍՌ ԳԱ, *Երեւան*), 1960, թ. 1 (8), էջ 265-266:
- Յ. ՔԻԻՐՏԵԱՆ, Պատմական առ Վ. Ոսկանեան՝ Իսրայէլ Օրիի խնդրով, «Քաղմովէպ», ծժԼ. (1960), թ. 1-2, էջ 34-39:
- Վ. ՈՍԿԱՆԵԱՆ, Իսրայէլ Օրու կողմից Պետրոս Ա-ին ներկայացուած նորայայտ փարտէզը, «Պատմա-բանասիրական Հանդէս» (ՀՍՍՌ ԳԱ, *Երեւան*) 1961, թ. 3-4 (14-15), էջ 297-306:
- Յ. ՔԻԻՐՏԵԱՆ, Դարձեալ Իսրայէլ Օրիի մասին, «Քաղմովէպ», ծԴ. (1962), թ. 6-8, էջ 155-164:
- ՎԱՐԴԱՆ Ա. ՊԱՐՍԱՐԵԱՆ, Լեւոնիայի մասնակցութիւնը Դաւիթ-Բէկի ապստամբութեանը (*Նոր Նիւթեր ԺԼ. դարձի հայ ազատագրական շարժումների վերաբերեալ*), *Երեւան*, Պետ. Հմտ. Հրատ. 1962, էջ 233:
- Յ. ՔԻԻՐՏԵԱՆ, Պարսաւեան Վ. Ա-ի «Լեւոնիայի մասնակցութիւնը Դաւիթ-Բէկի ապստամբութեան (զրախօսական)», «Քաղմովէպ», ծԻԱ. (1963), թ. 4-8, էջ 154-155:
- ՀԱՅՐԱՊԵՏ Ա. ԿՆԵԱՋԵԱՆ, Ազատագրական պայքարը Դաւիթ Բէկի զինուորութեանը, *Երեւան*, Պետ. հրատ. 1963, էջ 164:
- Յ. ՔԻԻՐՏԵԱՆ, Կնեազեան Հ. Ա-ի «Ազատագրական պայքարը Դաւիթ Բէկի զինուորութեանը» (զրախօսական), «Քաղմովէպ», ծԻԱ. (1963), թ. 4-8, էջ 155:
- ՄԻՔԱՅԷԼԵԱՆ Վ. Ա.- Ղրիմի հայկական գաղութի պատմութիւն, *Երեւան*, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1964, էջ 428 (յառկայէս՝ էջ 181-184):
- ՊԱՐՍԱՐԵԱՆ Վ. Ա.- Նոր նիւթեր Դաւիթ Բէկի ապստամբութեան մասին, «Գրական թերթ» (*Երեւան*) 1964, փետր. 14:
- ԳԱՐԻԲԵԼ ԳԱՏԿԱՆԵԱՆ, Հարիւրամեակ նոր Նախիջեւան ֆաղափի, Հմտ. «Յուդակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Բ. *Երեւան*, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1970, սինակ 818, ձեռագիր թիւ 8815, 8816, Է. 8817:
- ՍՈՂՈՄՈՆ ՕՐԲԵԼԵԱՆ, Դաւիթ Բէկի ծագումնաբանութեան հարցի մասին «Բանբեր Հայաստանի Արխիւներէ» (*Երեւան*), 1971, թ. 1 (28), էջ 173-184:
- Հ. ՓԱՓԱՋԵԱՆ, Հայ-իրանական զինակցութիւնը 1726-1736 թթ. եւ արեւելեան Հայաստանի ֆաղափական իրավիճակը Նախիր-Շահի օրոք, «Բանբեր» (*Երեւանի Համալսարանի*), 1972, թ. 2 (17), էջ 72-85:
- Ա. ԳՐԻԳՈՐԵԱՆ, Դաւիթ Բէկի ծննդավայրը, «Յառաջ» (Փարիզ), 1972, Մարտ 19 (թիւ 12-370):
- Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵԱՆ, Հ. Ղուկաս Սեբաստացի (1709-1752) հեղինակ Դաւիթ Բէկի պատմութեան, «Քաղմովէպ» ծԼ. (1972), թ. 4, էջ 491-501:
- S. A. ESSEFIAN, *The Mission of Israel Ori for the Liberation of Armenia*, in «Recent Studies in Modern Armenian History», National Association for Armenian Studies and Research, Inc., Cambridge, Mass. (U.S.A.), Armenian Heritage Press, 1972, pp. 1-10.
- MANOOG S. YOUNG, *Armenian Liberation Activities during the second Half of the eighteenth Century*, in «Recent Studies in Modern Armenian History», Nat. Ass. for Armenian Studies and Research, Inc., Cambridge, Mass. (U.S.A.), Armenian Heritage Press, 1972, pp. 11-22.
- Մ. Պ. ԱՂԱՅԵԱՆ (Եւ ուրիշներ), Հայ ժողովրդի պատմութիւն, հատոր Դ. *Երեւան*, ՀՍՍՀ ԳԱ Հրատ. 1972, էջ 684 (յառկայէս՝ էջ 134-189):

